արժէքը կորցրել է միայն երկու կողմերը բաժանող գիծը, իբրև հետեւանք ռուս զօրքերի հեռացման»:

Թիւրքերի կողմից գործում էին 36րդ դիվիզիայի մասերը — 2 հետեւակ գունդ, 2 հարիւրեակ հեծելազօր և 2 լեռնային թնդանօթ՝ ունենալով օդնական քրդական հրոսախմբեր: Այս ուժերի դէմ հայերը ունէին հազիւ 1000 սին, 120 ձիաւոր և 6 թնդանօթ. միւս ուժերը ստիպուած էին զբաղուել թիկունքի և ճանապարհների պաշտպանութեամբ: Մի քանի օրւայ յամառ կռիւներից յետոյ, յունւ. 31-ի երեկոյեան, հայկական զօրքերը հայ ազգաբնակութեան հետ պարպեցին Երզնկան և, անհնարին դժւարութիւններով նահանջեցին Էրզրումի ուղղութեամբ: Թիւրքերը կրնկակոխ հետեւում էին նրանց. քիւրդերը յարձակւում էին աջից ու ձախից, և դժւարացնում հայերի նահանջը, որը, աւելի շուտ, անընդհատ ճակատամարտների մի շարք էր: Եւ միայն գնդ. Հասան-Փաշայեանի ու Մուրատի քաջութեան շնորհիւ թշնամին յաջողութիւն չունեցաւ: Ճանապարհին միացան և Մամախաթունի և միւս շրջանների հայկական կռւող ուժերն ու գաղթականները: Եւ այս բազմահազար զանգւածը, սարսափելի ցրտի ու սառնամանիքի մէջ, ահագին զոհեր տալով, շարժւեց դէպի յետ: Զօրքի մօտ 40%ը և գաղթականների կէսը վնասւեց ցրտից. որի ձեռքն էր սառել, որի ոտքը կամ մարմնի ուրիշ անդամը: Սպանւածների ու վիրաւորների թիւը հաշււում էր հարիւրներով: Հասկանալի է, որ գազազած բազմութիւնը, իր հերթին, ինչով կարող էր վնասում էր ճանապարհին պատահած մահմետականներին: Եւ Երզնկայից մինչև Էրզրում ո՛չ մի մահմետական գիւղ կանգուն չմնաց. այրւեցին ու քար ու քանդ եղան, բնակչութիւնը փախաւ կամ կոտորւեց:

Նոյն ձեւով նահանջը տեղի ունեցաւ, փետր. 3-ին, և Բարերդի շրջանից, Սեպուհի անմիջական ղեկավարութեան տակ:

Հայերի արած փոխվրէժի քայլերը աւելի ևս գրգռեցին թիւրքերին, և պատերազմը փաստօրէն ստացաւ հայ-թիւրքական կոտորածի կերպարանք: Գերիներ չէին առնւում. երկու կողմն էլ իրենց ձեռքն ընկած հակառակորդին ոչնչացնում էր: Խնայել չկար: Պատերազմական օրէնքները չէին յարգւում: Մարդը մարդուն իսկական մաքով դարձել էր գազան:

Փետր. 11-ին Երզնկայի զօրքն ու ժողովուրդը հասաւ Էրզրում: Թիւրքերը աւելի և աւելի զարգացնում էին իրենց գործողութիւնները և տարածւում ուրիշ ճակատների վրա:

Նոյն փետր. 11-ին թիւրքերը մտան Տրապիզոն և գրաւեցին ռուսների թողած անհաշիւ ապրանքները, ռազմամթերքը, պարէնը, նաւահանգստի գոյքերը, երկաթուղային նիւթերը — տասնեակ միլիոնների արժողութեամբ հարստութիւններ:

Փետր. 18-ին Հայկ. կորպուսի սպայակոյտի պետ զօր. Վիշինսկին հեռագրում էր գլխաւոր հրամանատարութեան. «Կորչմայի զօրամասը հասաւ Իլիջա. ժամը 16-ի մօտերը, Կորչմայի կողմից, երեւացին ձիաւոր քիւրդեր, որոնք, մեր առաջապահների հետ հրացանաձգութիւն ունենալուց յետոյ, շուտով քաշւեցին: Խնուսի ուղղութեամբ, Սուլուխի կամուրջի մօտ, թիւրք ներկայացուցիչը կանչեց մեր սպային և հարցրեց, թէ ինչո՞ւ չենք